ԱԶԳԱՅԻՆԻ ԵՎ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Հ. Ա. ՎԱԹՅԱՆ

Սովետական Միությունը բազմազգ երկիր է։ Այդ պատճառով էլ մեզ մոտ սոցիալիզմի ու կոմունիզմի շինարարությունն ունի նաև իր սպեցիֆիկ առանձնահատկությունները։ Նրա հաջողությունն զգալի չափով պայմանավորված է ազգային հարաբերությունների զարգացումով։

Ինտերնացիոնալ-ընդհանուրի և ազգային-առանձնահատուկի ճիշտ զուգակցման պրոբլեմն ազգային շինարարության արմատական խնդիրներից մեկն է։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները միշտ ընդգծել են հասարակական առաջընթացի մեջ ինտերնացիոնալիստականի և ազգայինի ճիշտ զուգակցման մեծ նշանակությունը։ Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ «վելիկոռուսների ազգային հպարտության շահը (ծառայամտորեն չհասկացված) զուգադիպում է վելիկոռուս (և բոլոր այլ) պրոլետարների սոցիալիստական շահին»[1]։ Ֆ. Էնգելսը ևս նշել է. «Բանվորական շարժման մեջ իսկական ազգային գաղափարները... միաժամանակ և իսկական ինտերնացիոնալ գաղափարներ են»[2]։ Խոսելով լեհերի և իռլանդացիների մասին, Էնգելսը 1882 թ. իր մի նամակում գրել է. «Նրանք ավելի շատ ինտերնացիոնալիստական են հենց այն ժամանակ, երբ իսկական ազգային են»[3]։ Դրանում է բանվոր դասակարգի և ողջ աշխատավորության ինտերնացիոնալիստական և ազգային խնդիրների դիալեկտիկական միասնությունը։

Մեր երկրում ազգայնական նախապաշարմունքները վաղուց մասսայական բնույթ չեն կրում։ Բայց այնտեղ, որտեղ թուլանում է ինտերնացիոնալ դաստիարակությունը, իրենց զգացնել են տալիս ազգայնականության մնացուկները, որոնք մեծ չարիք են մեր առաջընթացի համար։

Կոմունիստական կուսակցությունը իր խնդիրը տեսնում է ոչ թե ազգային տարբերությունները սրելու մեջ, այլ ընդհակառակը, գտնում է, որ, այդ տարբերությունները հաշվի առնելով հանդերձ, պետք է առաջին պլանի վրա դնել այն ընդհանուրը, որը միավորում է տարբեր ազգերին ու ազգություններին։

Սովետական մարդկանց հայրենասիրությունը ոչ թե սահմանափակ ազգային է, այլ համասովետական։ Սիրել իր հայրենիքը, իր ժողովրդին ամենևին չի նշանակում ազգային շահերը վեր դասել համադասակարգային, ինտերնացիոնալ շահերից։ Եվ, ընդհակառակը, ինտերնացիոնալիստ լինել չի նշանակում չհարգել իր ժողովրդին, իր ազգային կուլտուրան, լեզուն։

---

[1] *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 122.*

[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 33, стр. 374.

[3] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 35, стр. 222.

«Ինտերնացիոնալիզմը, այսինքն սերը դեպի մարդկությունը, մեզ մոտ անցնում է հայրենիքի սիրո միջոցով։ Սերը սոցիալիստական հայրենիքի նկատմամբ դեպի ինտերնացիոնալիզմ տանող աստիճան է»[4]։

Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով ժողովուրդների դաստիարակումը հուսալի երաշխիք է ազգային սահմանափակության դրսևորման դեմ։

Ինտերնացիոնալիստականի և ազգայինի դիալեկտիկական միասնության զարգացման առանձնահատկությունը նրանում է, որ եթե սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում հանրապետությունների միջև տնտեսական հարաբերությունների գլխավոր ձևը տնտեսապես համեմատաբար զարգացած ազգերի կողմից թույլ զարգացած ժողովուրդներին ցույց տրվող օգնությունն էր, ապա զարգացման ժամանակակից փուլի համար բնորոշ է ոչ միայն միակողմանի, այլև գիտության ու տեխնիկայի նվաճումների երկկողմանի, փոխադարձ փոխանակումը։

Կոմունիստական շինարարության փուլում ինտերնացիոնալիստականի և ազգայինի միասնության զարգացման սկզբունքային նոր մոմենտ է կուլտուրայի դրսևորման մեջ ինտերնացիոնալ սկզբունքների ամրապնդումը ոչ միայն բովանդակության, այլև ձևի մեջ։

Մեր երկրում ճշմարիտ արվեստի համար չկան մեծ ու փոքր ժողովուրդներ։ Նրանք բոլորը հավասար են, բոլորի շահերը՝ կարևոր։ Նշելով ինտերնացիոնալիստականի և ազգայինի հսկայական նշանակությունը, հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցը սովետական գրողների առաջին համագումարում ասել է. «Ես ևս, որպես հայ գրող, պատկանում եմ «փոքր» ազգության և գիտեմ, որ եթե իմ ստեղծագործական գործունեությունը հոգեբանորեն սահմանափակեմ ազգային ներփակված շրջանակներում, ապա շատ ողորմելի կլինի նրա դիապազոնը և ազդեցության ոլորտը։ Ես երջանիկ եմ և զգում եմ ինձ մարդկության ամենաառաջավոր հոսանքի մասնիկը շնորհիվ այն բանի, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը վերացրել է իմ հոգևոր տեսադաշտից ազգային ինքնասահմանափակումների այդ ողորմելի ցնորքը»[5]։

ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծումը, որը կապված է սոցիալիստական սկզբունքներով մարդկանց հասարակական հարաբերությունների հեղաշրջման հետ, բնականաբար սովետական ազգերի ու ազգությունների զարգացման մեջ առաջ է բերել նոր օրինաչափություններ։ Սոցիալիստական հասարակության մեջ ազգերի ու ազգային հարաբերությունների ծաղկումն ու մերձեցումը, որը տեղի է ունենում նրանց բարեկամական համագործակցության և եղբայրական փոխօգնության հիման վրա, օբյեկտիվ օրինաչափություն է։

Սոցիալիզմի պայմաններում արմատապես փոխվում է մարդկանց ազգային բնավորությունը։

«Ազգային» հասկացությունը մեզ մոտ մշտապես ձեռք է բերում ավելի ու ավելի հարուստ բովանդակություն, արտահայտում է ազգայինի ու ինտերնացիոնալիստականի միասնության գաղափար։ Այդ տենդենցը նկատի ունենալով Մ. Ա. Սուսլովը գրել է. «Ճիշտ չէր լինի ազգային սովորույթ համարել միայն այն, ինչը ազգային մի կուլտուրան տարբերում է մյուսից կամ միայն այն, ինչը կապված է ժողովրդի անցյալի հետ, նրա պատմության հետ, այն բանի հետ, ինչն արտահայտել է ժողովրդի տանջալի կյանքը սոցիալական և ազգա-

---

[4] А. Н. Толстой, Избр. соч., т. 6, М., 1953, стр 398.

[5] Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1967, էջ 272։

յին ճնշման պայմաններում։ Անհրաժեշտ է ավելի լավ տեսնել և պաշտպանել այն նոր սովորույթները, ընդհանուր գծերը, որոնք ձևավորվում են սովետական սոցիալիստական ազգերի փոխհարաբերությունների մեջ՝ կոմունիստական շինարարության ընթացքում»[6]։

Այն ամբողջ առաջավորը, որ կոմունիզմի շինարարության ընթացքում ստեղծվում է յուրաքանչյուր ազգի կողմից, ժամանակի ընթացքում դառնում է և մյուս ազգերի սեփականությունը։ Այդ պատճառով ազգային գծեր համարել միայն այն, ինչը մի ազգին տարբերում է մյուսից, կնշանակեր տվյալ ազգի կերպարի մասին աղքատ պատկերացում ունենալ։ Սոցիալիստական ազգերի ու ազգությունների բնավորության այնպիսի գծերը, ինչպիսիք են՝ սոցիալիստական ինտերնացիոնալիզմը, սովետական հայրենասիրությունը, սերը սոցիալիստական երկրների նկատմամբ, նվիրվածությունը կոմունիզմի գործին, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքը, հասարակական պարտքի բարձր գիտակցումը, կոլեկտիվիզմը, սոցիալիստական հումանիզմը, ազգային և ռասայական անարդարությունների և կոմունիզմի թշնամիների նկատմամբ անհանդուրժողականությունը, ժողովուրդների միջև բարեկամության և փոխօգնության զգացումը, որոնք նոր, սոցիալիստական հարաբերությունների արտացոլումն են, դարձել են ամեն մի ազգի սովետական մարդկանց սեփականությունը։ Այդ գծերը ձևավորվում ու զարգանում են սոցիալիզմի ողջ հասարակական-քաղաքական կարգի, նրա մարքսիստական-լենինյան գաղափարախոսության միջոցով։ Դրանք ընդհանրացված ձևով կազմում են սովետական բնավորությունը, որն արտացոլում է ազգայինի և ինտերնացիոնալիստականի միասնությունը։

Մարքսիզմ-լենինիզմը գիտականորեն ապացուցել է, որ սոցիալիստական ազգերն ու ազգությունները գոյություն ունեն և երկար ժամանակ պետք է գոյություն ունենան հենց այն պատճառով, որ նրանք հիմնված են պատմականորեն ձևավորված տերիտորիայի, տնտեսական կապերի, լեզվի, կենցաղի ու կուլտուրայի, ինչպես նաև հոգեկան կերտվածքի կայուն ընդհանրության վրա։ Մինչդեռ, հենց հիմա արդեն կարծիքներ են հայտնվում, թե ազգի այդ հատկանիշները կորցնում են իրենց նշանակությունը։ Այսպես, օրինակ, Կ. Նուրեն-բեկովը գրում է. «Ժամանակակից էտապում ՍՍՀՄ-ում ազգային պետականությունն իր զարգացման նոր աստիճանին է բարձրացել։ Այդ աստիճանում տեղի է ունենում ազգային-պետական սահմանների հետզհետե վերացում», վրա է հասնում «ազգային հանրապետությունների լիակատար պետական միաձուլման» ժամանակաշրջան։ Այնուհետև նա փորձում է ապացուցել, որ «արդեն հիմա մեր աչքերի առջև տեղի են ունենում այնպիսի պրոցեսներ», որոնք խորտակում են պետականության հին պատկերացումներն ու հին ձևերը»[7]։

Հայտնի է, որ ՍՍՀՄ-ում ազգերի ու ազգությունների կյանքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր փոփոխությունների հետևանքով ձևավորվել է մարդկանց նոր, պատմական-ինտերնացիոնալ ընդհանրությամբ սովետական ժողովուրդը։ Այդ կապակցությամբ որոշ հետազոտողներ հիշյալ ընդհանրությունը մեկնաբանում են որպես ՍՍՀՄ տարբեր ազգերի վերացում։ Այսպես, Ա. Ա. Իսուպովը պնդում է, որ սովետական ազգերի

---

[6] «Литература и жизнь», 20. VII. 1960.

[7] Տե՛ս «Материалы всесоюзного координационного совещания по проблеме и развитию национальных отношений...», М., 1963, стр. 16.

համակողմանի զարգացումը և նրանց մերձեցումը նպաստում է «միասնական մայրենի լեզվով միասնական ազգի ձևավորմանը»[8]։ Մեկ այլ ուսումնասիրող՝ Մ. Մ. Իխիլովը, գրում է, որ «արդեն մեր օրերում ձևավորվում են նախադրյալներ և նշմարվում է նոր էթնիկական ընդհանրության կերպարը՝ սովետական ազգը, որը ծնվում է մեր երկրում կոմունիստական շինարարության պրակտիկայով»[9]։

Ազգային պրոբլեմներն ուրույն ձևով է մեկնաբանում բուրժուական սոցիոլոգիան, որը ներկայումս արտակարգ հետաքրքրություն է դրսևորում ազգային հարաբերությունների և ժամանակակից նացիոնալիզմի պրոբլեմների նկատմամբ։ Այսպես, բուրժուական հետազոտող Դ. Պոտերը գրում է. «Քանի որ նացիոնալիզմի թռիչքը դարձել է ժամանակակից շրջանի քաղաքական զարգացման գլխավոր արդյունքը, արդի պատմաբանների ուշադրության կենտրոնում գտնվում են հենց ազգային և ոչ թե որևէ այլ խմբեր»[10]։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարախոսության թշնամիները փորձում են ապացուցել, որ իբր, մարքսիստական գիտությունը, քանի որ այն ելնում է այլ ռացիոնալ օբյեկտիվ չափանիշներից, անկարող է բացահայտել նացիոնալիզմի բնույթը՝ որպես իր էությամբ իռացիոնալ և անհասանելի։

Ժամանակակից բուրժուական ռեակցիոն գաղափարախոսները, օրինակ, Ու. Ռոսթոուն, Ռ. Արոնը, Դ. Ուիլերը, Ռ. Փայփսը, Վ. Քոլարզը և ուրիշներ, պնդում են, որ, իբր, ՍՍՀՄ-ում տեղի է ունենում բոլոր ոչ ռուս ազգությունների բռնի ասիմիլյացիա[11]։ Նացիոնալիզմի շատագովները բարբաջում են այն մասին, որ, իբր, Սովետական Միությունը խնդիր չի դրել իր կազմի մեջ մտնող ազգային հանրապետություններում ստեղծելու ազգային էկոնոմիկա։

Սովետական Միության թշնամիների այդ և նման այլ զրպարտչական հերյուրանքները դեն են նետվում օբյեկտիվ իրականությամբ, համոզիչ փաստերով։ Սովետական իշխանության, ռուս մեծ ժողովրդի կողմից ցույց տրվող բազմակողմանի օգնության շնորհիվ միայն միութենական հանրապետությունները ստեղծել են իրենց ազգային էկոնոմիկան, մշակույթը։ Բոլոր հանրապետություններում ստեղծված են ժամանակակից արդյունաբերության այնպիսի որոշիչ բնագավառներ, ինչպիսիք են էլեկտրաէներգիայի արտադրությունը, մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը։ Ըստ որում, հենց սոցիալիստական արտադրական հարաբերություններն են ծնում սոցիալիստական ազգերի ու ազգությունների զարգացման սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր մակարդակների հավասարեցման օրինաչափություն, որը և այժմ դրսևորվում է կոմունիզմի շինարարության մեջ[12]։

Մեր կուսակցությունը մշտապես ղեկավարվում է լենինյան այն ցուցումով, որ «պրոլետարի համար ոչ միայն կարևոր, այլև էապես անհրաժեշտ է պրոլետարական դասակարգային պայքարի մեջ իրեն ապահովել այլազգիների առավելագույն վստահությամբ... Դրա համար հարկավոր է ոչ միայն ձևական հա-

---

8 Տե՛ս «Национальный состав населения СССР», М., 1964, стр. 9.

9 Տե՛ս «Советская этнография», 1965, № 6, стр. 101.

10 Տե՛ս «Вопросы философии», 1970, № 3, стр 18.

11 Э. А. Баграмов, Национальный вопрос и буржуазная идеология, М., 1966, стр. 260—262.

12 Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Ա. Մելիքյան, Սոցիալիզմը և ազգերը, Ե., 1969, էջ 443—450։

վասարություն։ Դրա համար հարկավոր է այլազգերի նկատմամբ ունեցած իր վերաբերմունքով կամ զիջումներով այսպես թե այնպես փոխհատուցել այն ստրկահությունը, այն կասկածամտությունը, այն վիրավորանքները, որ պատմական անցյալում նրան հասցրել է «մեծապետական» ազգի կառավարությունը»[13]։

Զարգացած ազգերի կողմից նախկինում հետամնաց ժողովուրդներին ցույց տրվող օգնության ձևերն ու մեթոդները մեզ մոտ եղել են բազմազան։ Այսպես, օրինակ, 1924 թ. հինգ տարով ընդհանուր քաղաքացիական հարկերից ազատված էին Միջին Ասիայի, թաթարական, չուվաշական, մարիական և կալմիկական ժողովուրդները։ Այդ ժողովուրդներին ցույց տրվող օգնությունը հաշվի էր առնվել նաև համամիութենական բյուջեի պլանավորման ժամանակ[14]։

Տնտեսական շինարարության մեջ ՍՍՀՄ ժողովուրդների համագործակցության և փոխօգնության սկզբունքների կենսագործումը նշանակում էր սոցիալիստական պետության կողմից նյութական ռեսուրսների վերաբաշխում՝ հօգուտ նախկինում հետամնաց ժողովուրդների։

Այժմ ևս մեր կուսակցությունը վարում է նախկինում հետամնաց ժողովուրդների տնտեսական, քաղաքական և հոգևոր մակարդակների համահարթեցման քաղաքականություն։ Այսպես, օրինակ, 1969 թ. դեկտեմբերին ՍՍՀՄ Գերագույն սովետի յոթերորդ նստաշրջանում ընդունված պետական բյուջեի մասին օրենքի համաձայն շրջանառության հարկերից մասհանումները 1970 թ. հաստատված են՝ Ուզբեկական ՍՍՀ-ում՝ 100 տոկոս, Տաջիկական ՍՍՀ-ում՝ 100 տոկոս, Հայկական ՍՍՀ-ում՝ 100 տոկոս, այն դեպքում, երբ այդ մասհանումները ՌՍՖՍՀ-ում պետք է կազմեն 32,7 տոկոս, Ուկրաինական ՍՍՀ-ում՝ 27,2 տոկոս։

Բնակչության եկամտահարկից մասհանումները պետական բյուջե Հայկական և Թուրքմենական հանրապետություններում հաստատված են 100 տոկոսի չափով։ Բացի դրանից, 1970 թ. միութենական բյուջեից լրացուցիչ դրամական միջոցներ են առանձնացվում Ուզբեկական, Ղազախական և Տաջիկական հանրապետություններում մի շարք միջոցառումների համար, որոնք նախատեսված են 1970 թ. ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանով։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանը հսկայական թռիչք է կատարել դարավոր հետամնացությունից դեպի արտադրողական ուժերի ու մշակույթի առաջընթացը։ Անցած տարի հանրապետության արդյունաբերական արտադրության ծավալը 1913 թ. մակարդակը գերազանցեց 180 անգամ։ Հանրապետությունում կառուցվել են ավելի քան 600 արդյունաբերական ձեռնարկություններ, նախկինում էներգետիկական բազա չունեցող Հայաստանը այժմ դարձել է համատարած էլեկտրիֆիկացիայի հանրապետություն։ Նրա ձեռնարկությունների արտադրանքն արտահանվում է աշխարհի 70 երկրներ։

Ինչպես միասնական բազմազգ պետության ներսում ազգերի փոխհարաբերությունները, այնպես էլ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի մեջ պետությունների հարաբերությունները ունեն ընդհանուր հիմք՝ սոցիալիստական ինտերնացիոնալիզմը։ Ընդգծելով ազգային մեկուսացման վտանգը, Վ. Ի. Լե-

---

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 703։

14 Տե՛ս Масхуд Джунусов, Единой семьей. «Комсомольская правда», 27. VIII. 1967.

նինը դրել է. «... Ով կանգնել է նացիոնալիզմի տեսակետի վրա, նա, բնականաբար, հասնում է իր ազգությունը, իր ազգային բանվորական շարժումը չինական պարիսպով շրջապատելու ցանկությանն»[15]։

Այժմ, երբ լրիվ ինտերնացիոնալացվել է դասակարգային պայքարը և իմպերիալիզմի ստրատեգիան գլոբալ բնույթ է ստացել, ավելի քան երբևէ անհրաժեշտ է բոլոր կոմունիստական կուսակցությունների ինտերնացիոնալ միասնությունը ժողովուրդների ազատության, խաղաղության և սոցիալական առաջընթացի համար մղվող պայքարում։ Վ. Ի. Լենինը գրել է. «Մենք կգործադրենք բոլոր ջանքերը, որպեսզի մերձենանք և միաձուլվենք մոնղոլների, պարսիկների, հնդիկների, եգիպտացիների հետ, մենք մեր պարտքը և մեր շահն ենք համարում անել այդ, որովհետև այլապես սոցիալիզմը Եվրոպայում անկայուն կլինի»[16]։

Մեր կուսակցությունը սոցիալիստական երկրների եղբայրական կուսակցությունների և ժողովուրդների հետ ունեցած փոխհարաբերություններում ղեկավարվում է Ֆ. Էնգելսի այն ցուցումով, որ «ինտերնացիոնալ համագործակցությունը հնարավոր է միայն հավասարների միջև, որ նույնիսկ հավասարների մեջ առաջինի դերը հնարավոր է թերևս միայն անմիջական գործողության ժամանակ»[17]։ Նշանակում է, իսկական ազգային շահերը չեն կարող հակադրվել ինտերնացիոնալիզմին, ճիշտ այնպես, ինչպես ինտերնացիոնալ շահերը չեն կարող խանգարել կյանքում արմատավորելու սոցիալիստական ազգային շահերը։

Մեր ժամանակներում, սոցիալիզմ կամ կոմունիզմ կառուցող հասարակության պայմաններում չի կարելի լինել հայրենասեր, միաժամանակ, չինելով ինտերնացիոնալիստ, որը հետևողականորեն չպայքարի նացիոնալիզմի դրսևորումների, ժամանակավոր ու մասնավոր շահերը հիմնական ու ընդհանուր շահերից կուրորեն գերադասելու փորձերի դեմ։

«Սովետական Հայաստանի ժողովուրդը, կոմունիստներն ու անկուսակցականները, բանվորությունը, գյուղացիությունն ու մտավորականությունը հայրենասիրության ոգին սքանչելիորեն զուգորդում են սովետական մարդու միայլ, ոչ պակաս արժեքավոր հատկության՝ ինտերնացիոնալիզմի հետ», ասաց Լ. Ի. Բրեժնևը իր ելույթում՝ Երևան քաղաքում 1970 թ. նոյեմբերի 30-ին տեղի ունեցած ընդունելության ժամանակ։

Լինել հայրենասեր և միևնույն ժամանակ տոկուն, համոզված ինտերնացիոնալիստ՝ նշանակում է խորապես ըմբռնել սոցիալիստական աշխարհայացքը, սոցիալիստական մշակույթը, նշանակում է հավատարիմ լինել լենինյան մեծ ուսմունքին»[18]։

Նացիոնալիզմի թույնով վարակված մարդիկ սոցիալիզմի համաշխարհային սիստեմում ժողովուրդների ինտերնացիոնալ միասնությանը հակադրում են ազգային ինքնուրույնությունը, փորձելով ապացուցել դրանց անհամատեղելիությունը։ Մինչդեռ իրականում ինտերնացիոնալիզմն ոչ միայն չի բացասում ազգերի ու պետությունների ինքնուրույնությունը սոցիալիստական սիստեմում, այլ, ընդհակառակը, դրա ամրապնդման երաշխիքն է։

---

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 663։

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 77։

17 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 35, стр: 22.

18 Л. И. Брежнев, Пятьдесят лет Советской Армении, Ер., 1970, стр. 60.

Ազգային եսասիրությունը, ինչպիսի ձևերով էլ այն դրսևորվի, ուղղված է սեփական երկրի սոցիալիստական կարգի դեմ։ Այդ միտքը խորը կերպով հիմնավորել է ՉԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Հուսակը. «...Յուրաքանչյուր կուսակցության և սոցիալիստական երկրի ինքնուրույնության ապահովումը միաժամանակ նրանց պարտավորեցնում է պահպանել ու պաշտպանել բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավորության նվաճումները։ Այդ իմաստով սոցիալիստական պետության ինքնուրույնության դասակարգային բովանդակությունն անխզելիորեն կապված է ինտերնացիոնալ պատասխանատվության հետ՝ սոցիալիստական երկրների համագործակցության և միջազգային կոմունիստական ու հեղափոխական շարժման առջև»[19]։

«Հենց դրա համար,— նշել է Յանոշ Կադարը,— ոչ ոք չի կարող իրեն ինտերնացիոնալիստ կոչել, եթե նա հակադրվում կամ երես է թեքում Սովետական Միությունից»[20]։

Ինտերնացիոնալիստականի և ազգայինի զուգակցման զարգացումն ու կոնկրետացումը մենք տեսնում ենք կոմունիստական ու բանվորական կուսակցությունների 1969 թ. Մոսկվայում տեղի ունեցած խորհրդակցությունում։ Խորհրդակցության ամփոփիչ փաստաթղթում ընդգծվում է, որ մարքսիստ-լենինյանները միաժամանակ հայրենասերներ և ինտերնացիոնալիստներ են. նրանք ժխտում են և՛ ազգային սահմանափակությունը, և՛ ազգային շահերի անտեսումը կամ թերագնահատումը, և՛ հեգեմոնիզմի տենդենցը։

ՍՄԿԿ-ն միշտ ղեկավարվում է նրանով, որ ո՛չ նացիոնալիզմը, ինչպիսի ձևերով էլ այն լինի, ո՛չ ազգային նիհիլիզմը համատեղելի չեն սոցիալիզմի և հասարակության առաջընթացին ընդհանրապես։ Լենինիզմի ամենահաղթ ուժի կարևոր աղբյուրն այն է, որ նրա հենց էության մեջ դրված է պրոլետարական ինտերնացիոնալիզմը։ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներում ասված է. «Ինտերնացիոնալիստական քաղաքականության կենտրոնական հարցը Լենինը համարում էր ազգայինի ու միջազգայինի ճիշտ զուգորդումը պրոլետարական կուսակցությունների հեղափոխական շարժման բոլոր ջոկատների գործունեության մեջ։ Վճռականորեն հանդես գալով ամեն տեսակ ազգային նիհիլիզմի դեմ, Լենինը հեղափոխականներին սովորեցնում էր հետևողականորեն հաշվի առնել ազգային ջահերը, պաշտպանել բոլոր ազգերի իրավահավասարության սկզբունքները, նրանց անկախության, ինքնուրույն զարգացման իրավունքները»[21]։

Ազգային հարաբերությունների հարցում մարքսիզմ-լենինիզմը դրսևորում է կոնկրետ պատմական մոտեցում։ Փորձը վկայում է, որ հասարակական կյանքի զարգացման բեկման էտապներում, երբ սրվում են բոլոր սոցիալական կոնֆլիկտները, նշանակալի սրություն և կարևորություն են ձեռք բերում նաև ազգային պրոբլեմները։

Ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության և համագործակցության լենինյան գաղափարների վառ հաղթանակը հանդիսացավ Վ. Ի. Լենի-

---

19 Международное совещание коммунистических и рабочих партий. (Москва, 1969), Прага, 1969, стр. 524.

20 «Правда», 10. IV. 1964.

21 Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ ՍՄԿԿ ԿԿ թեզիսներ, Ե., 1970, էջ 53—54։

նի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունը։ Այն ակնառու ու հզոր կերպով արտացոլեց սոցիալիստական ինտերնացիոնալիզմի լենինյան անմահ գաղափարների հաղթարշավը ամբողջ աշխարհում, բոլոր ժողովուրդների միասնությունն ու համերաշխությունը, ազգերի ու ազգությունների մերձեցումն ու ծաղկումը։ Մոլորակի միլիոնավոր մարդկանց հայացքներն ու սրտերն ուղղված են դեպի լենինիզմի հայրենիքը, որտեղ առաջին անգամ գործնականում Լենինի գաղափարներն ու գործերը ստացան իրական մարմնավորում։

ЕДИНСТВО ИНТЕРНАЦИОНАЛЬНОГО И НАЦИОНАЛЬНОГО ПРИ СОЦИАЛИЗМЕ

Г. А. ВАТЬЯН

Резюме

Проблема правильного сочетания интернационально-общего и национально-специфического — одна из коренных проблем в теории и практике национальных отношений.

Категория «национальное» постоянно развивается, обогащается, выражая объективный процесс приближения к интернациональному. Во взаимоотношениях наций в ходе коммунистического строительства складываются новые традиции, общие черты характера людей различных наций.

То, что способствует прогрессу нации, неизбежно рано или поздно становится общесоветским. Патриотизм советских людей не национально ограниченный, а общесоветский.

Любить свою Родину, свой народ отнюдь не значит ставить национальные интересы выше общеклассовых, интернациональных интересов и, наоборот, быть интернационалистом не значит проявлять неуважение к своему народу, к своей национальной культуре, языку.